

Տ Ե Ղ Ե Կ Ա Բ Ե Ր

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻԻ

ՊԵՏՐՈՒԹ, ՄԱՅԻՍ—ՑՈՒՆԻՍ 1957

P.O.B. 2508

TEL. 27397

TEL. 40371

ԳՐԱՍԵՆՆԱԿ

ԵՐԻՑԱՏՈՒՆ

Դաստիարակում...

K. Bogharian

Գրեց՝ ՎԵՐ. Կ. Ս. ԹԻԼՔԵԱՆ

Ժամանակը ասուպական գնացքով կը սահի: Դեռ երէկ էր դպրոցամուտը, եւ ահա արդէն ամալներջի մօտալուտին ծրագիրներ կը մշակուին նախատեսելի առատ հունձքով: Ի՞նչ մեծ օրհնութիւն է տարիներ շարունակ ճախրել՝ դէպի աղբիւրը լոյսին, արժանանալով դաստիարակուած անձի որակին:


Ճատտիարակուածքը անպատճառ ան չէ որ ունի բարձր նիշեր, գիտութեանց ճոխ մթերք, կամ ունի բարձրագոյն ուսում եւ պատուոյ ճախլում: Դաստիարակութիւնը ոչ միայն հոմանիշ չէ ուսումի, ե՛ւ իսկ դերիւկեր անոր . .

Ուսումը քանակական երեւոյթ է, իսկ դաստիարակութիւնը որակական ու մեկնաբանական եւ առաւելաբար բարեկրթական կը պարզէ ուսումին արժէքն ու գոյապատճառը . . . Ուրեմն դաստիարակութիւնն է որ կ'իմաստաւորէ եւ կ'արժէքաւորէ ուսումը եւ կը պատասխանէ հարցումին՝ ո՞վ է ճշատտիարակուածքը:

Ճատտիարակուածքը ան է որ կարողացած է տիրանալ մարմնի, միտքի, հոգիի անխզելի եւ ամբողջական զարգացման, որուն լաւագոյն օրինակը կը ցոլացնէ Յիսուս, որ Վերջապահ իմաստութիւնով ու հասակով, եւ Աստուծոյ ու մարդոցմէ շնորհք գտնելով: Ղուկ. Բ 52:

Դաստիարակուած մարդու ուրիշ իսկական մէկ յատկութիւնը կը կայանայ ինքնաբերականութեան մէջ: Անիկա միշտ խո-

1318



նարհ եւ պատրաստակամ է տեսնելու եւ ընդունելու իր սխալ-
ներն ու տկարութիւնները: Անիկա սոփիստութեան եւ ինքնար-
դարացման ախտերէն զերծ է: Միթէ Քթաղաքակրթութիւնն ըս-
ուածը ինքնասրբագրութիւն չէ՞ անկուծի ու վերելքի ճանա-
պարհով: Նոյն ճշմարտութիւնը կը յայտարարէ Պօղոս առաք-
եալ երբ կ'ըսէ, «Զօրաւոր եմ երբ տկար...»: Բ Կորն. ԺԲ 10:

Ուսանող մնալ... սորվիլ... տեսականօրէն բարեբերութիւն
ու զարգացալ: Այսպէս է դաստիարակուած մարդը: Շատե-
րուն դժբախտութիւնը իրենց կայունութեան եւ յետադիմու-
թեան պէտք է վերագրել: Ասոնք դադարած են սորվելէ, եւ ի-
րենց դատարկութիւնը կը յայտնեն միայն քննադատելով այն
ինչ որ լոյս է՝ աւելի ճիշդ՝ դրական ամէն յառաջդիմութիւն:
Աւետարաններուն մէջ «փարիսեցի» խորհրդանշել է կայունու-
թեան, իսկ Յիսուս ջատագով է զարգացման, ճշոր գինին նոր
տիկնոլ մէջ՝ Ղուկ. Ե 37—39. Չենք զարմանար երբ այս եր-
կու զարտուղի սկզբունքները չեն կրնար դոյակցիլ եւ կ'ունե-
նան բախում: Նազովրեցի լ'աւագոյնս հասկցող ու զԱյն վեր-
լուծող Տարսոնացի մեզ ալ կը հրաւիրէ ուսանող թլլալու եւ
ուսանող մնալու խոնարհ դիրքին: Ճշտէն քիչ մը տեղեկ եմ,
բայց պիտի ճանչնամ...»: Ա Կորն. ԺԳ 12:

Թէպէտ դաստիարակութիւն տեսած անձ մը բազմապիսի
առաքինութիւններով կը ներկայանայ, եւ անտարակոյս նիւթը
ընդարձակ է եւ կարելի է զայն ընդլայնել, բայց հոս կենալու է
յիշելով վերջին ճշմարտութիւն մը: Դաստիարակուած անձի ու-
րակը կը յայտնաբերուի իր օգտակարութեամբ: Ան կը սիրէ, կը
ստեղծագործէ, կը շինէ, կուտայ, գերազանցապէս այլասէր է,
ե ուրեմն ծառայանուէր: Անոր աշխարհայեացքը միշտ դրական
է ամէն տեղ եւ ամենուն: Անիկա այս դրականութեան ակունքը
գտած է առանձնաբար եւ փորձառաբար յանձնուելով Անոր որ
պատարագուելով ապրեցաւ մեծագոյն պատուիրանքը ու զայն
կտակեց յետնորդ սերունդներուն:—

«Բա՛ն Տէր Աստուածդ սիրես քա՛ն բոլոր սրբովդ եւ քա՛ն բոլոր
անձովդ ու քա՛ն բոլոր միսեովդ. այս է առաջին ու մեծ պատւիրան-
քը: Ու երկրորդը ասոր նման, քա՛ն քնկերդ սիրես քա՛ն անձիդ պէս:
Այս երկու պատւիրանքէն կախուած են բոլոր օրէնքն ու մարգարե-
ները»: Մատթ. ԻԲ 38—40:

Աշխարհ կարօտ է այս դաստիարակութեան, նոյնպէս ե՛ւ
մենք...

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԿԵՂԵՑԻՈՅԸ 1956 ՏԱՐՈՒՄՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆՑ

(ՆԱԽՈՐԴ ԹԻԻԷՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՇԵՆՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻ

Շէնքի Յանձնախուժքի ներկայ գործին անդամները հետեւեալներն են. — Տիար Ե. Էքսիւքեան, Ատենապետ, Յ. Կ. Պեգնեան, Գանձապահ, Բ. Կիւլխեքեան, Ատենադպիր, Պր. Յ. Սաւսեան և Ե. Լօթսսեան, Խորհրդատու անդամներ: Ասոնցմէ զուրս հետեւեալները կը միտն պատուոյ ցանկին վրայ — Վեր. Կ. Թիլքեան, Տիար Դ. Բիթեքեան, Լ. Կեօնեան և Ն. Արսլանեան:

Ճաշով կ'արձանադրենք որ 1956ի կէսին Յանձնախուժքիս նստիկին Ատենապետ Պր. Յ. Սալիպեան անձնական պատճառներով քաշուեցաւ ժողովէն: Սա մեծ կորուստ մըն էր մեզի:

Երկրորդ կորուստ մը եւս ունեցանք: Այդ էր սրահի անուանակոչումին համար վաճառած աշխատանքն ու ժամանակը: Այդ վէճը պատճառ կըլարէ մը աշխատանքներուն մօտ վեց ամիս ուշանալուն:

Ժողովս 1956ի շրջանին ևւ մինչեւ թուական 21 պաշտօնական ևւ 15 անպաշտօն ժողովներ: Տասնէ աւելի անդամներ այցելութիւններ տուաւ զանազան նորակառոյց եկեղեցիներու ևւ աշխատանքներու՝ տեսնելու ևւ սերտելու համար յարմարադոյն ոճը ևւ առաջնաձեւ՝ նախնական եկեղեցիի մը ներքին զարդարանքները կատարելու համար: Այս բոլորէն ևւ քաշուեցաւ տուաւ ևւ ծրագիրներ մշակեց հետեւեալ աշխատանքներու շուրջ:

1. Եկեղեցիի սրահին վերջնական կառուցումը ու կահաւորումը ըստ Գրէճեան Հաստատութեան պատրաստած քարտէսին ևւ անոր մասնաւոր անոթներ:

2. Երրորդ ու վերջնական հանգանակութիւնը կազմակերպել ևւ դարձի դնել:

3. Վարի սրահին կահաւորումը ևւ գործածութեան դրուիլը:

Հետեւեալ աւսանանքները եղած են. —

ա) Բեմը իր թոռներով, ամբիոնով ևւ կազմուածքով պատրաստ է ևւ տեղաւորումի կը պատէ:

բ) Սալաշատակի քարերը պատրաստ են ամենէն լու տեսակէն:

գ) Եկեղեցւոյ սրահին կամարները ապսպրուած են ևւ աշխատանքները սկսած են:

դ) Գերմանական ապակիի գործարանի մը հետ պատուհանի դժագրութեան վերջնական ձեւին վրայ համաձայնած ենք, որ գունաւոր ապակիներէ չիւնուած Բրիտանի խաչը կը պատկերացնէ:

կ) Նստարաններէն 60 հատ շինուած եւ գործածութեան դըր-
ուած են:

զ) Վարի սրահին ետեւի խոհանոցը եւ քովի սենեակը կահա-
ւորուած են:

է) Սրահին բեմին եւ պատուհաններուն վարագոյր շինուած է:

ը) Շինութեան ի նպաստ ֆոնդէ մը սարքուցուաւ, որուն եր-
դեց Օր. Գուհարապետեան, եւ որ կոկիկ շահ մը ապահովեց:

թ) Կրքորդ եւ վերջնական հանգանակութիւնը բացուցաւ
կառն ժողովի եւ օգնական խումբերու գործակցութեամբ: Կոստուած-
ներու գումարը հասու 41,000 Լ.Ի.Ք. Ոսկիի:

Մեր կատարած աշխատանքներու շրջանին սերտօրէն գործակ-
ցած ենք հետեւեալ երեք մարմիններուն հետ եւ միշտ տրուած թելադ-
րութիւններուն յարմարագոյնը որդեգրած ենք մեր որոշումները տա-
լու ժամանակ: Այդ մարմիններն են. —

ա) Եկեղեցիին Թեքնիք Յանձնախումբը:

բ) Գլխահան Գործերէյըն (Միացեալ Նահանգներու մէջ):

գ) Նախապէս Եկեղեցիի շինութեան հակող Տէլթա Երկրաչափ-
ներու Ընկերութիւն (Պէյրութ):

Նիւթական գետնի վրայ մանրամասն կերպով մեր հաշիւները
կարելի է գտնել մեր տետրակներուն մէջ: Հոս պիտի գոհանանք մուս-
քի եւ ելքի արդիւնքները միայն յիշելով. —

ՄՈՒՏՔ

	Լ.Ի.Ք. Ոսկի
1956ը սկսանք գործին մէջ ունենալով	14,484.80
1956ի շրջանին զանազաններէ նուէր ստացուած	13,086.90
1956ի շրջանին Յրդ. հանգանակութենէ մուտք	7,835.00
Գումար	35,406.70

ԵԼՔ

Ժողովին Եկեղեցիներու վերստին ստանալու	2,500.00	
Եղած զանազան ծախքերու	6,534.15	9,034.15
	Գումար	26,372.55
Այս գումարին մէջ մասնաւոր շինու-		
թիւներու համար յատկացուած գումարը կը հասնի		21,308.70
Կշիռ 1 Յունուար 1957		5,063.85

Շէնքի Յանձնախումբը այս բոլորին հետ մէկտեղ մեծ բան մը
կատարած ըլլալու յատկութիւնը չունի, սակայն ձեր բոլորին գոր-
ծակցութեամբ եւ ներկայ պայմաններուն մէջ իր լաւագոյնը կատա-
րած է մեր սիրելի Եկեղեցիին շինութեան եւ Աստուծոյ փառքին համար:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴՊՐՈՑԻ ՇՈԳՐԱՐՁՈՒԹԵԱՆ.

Կրօնաբարոյական դաստիարակութեան բարելաւում.— Դպրոցին հոգեւոր—բարոյական մթնոլորտին բարելաւման համար Հոգաբարձութիւնս կարելին ըրած է և պիտի ընէ: Տարեշրջանիս ընթացքին աշխատանք տարուած է ամբողջ ուսանողութիւնը առաջնորդելու Կիրակնօրեայ վարժարանի և եկեղեցական պաշտամունքի: Ծնողք իրենց զաւակները մեր վարժարանը կը զրկեն դնահատելով դպրոցիս կրօնական եւ բարոյական կրթիչ միջավայրը:

Ուսման ծրագրի բարեփոխում.— Ինչպէս միշտ, այս տարեշրջանի ընթացքին ալ Հոգաբարձութիւնս ջանաց բարեփոխել վարժարանիս կրթական ծրագիրը: Սահմանափակուած ըլլալով թէ՛ Լիբանանեան Պաշտօնէայի, թէ՛ Ամերիկեան Համալսարանի, Պէյրութի Աղջկանց Ամերիկեան Գոլէճի, եւ թէ՛ Հայ Աւետ. կրթական չափանիշներով, ջանաւորինք ընել պարտաւերջելու պարտադրածին լաւագոյնը:

Ուսուցչական եւ վարչական անձնակազմեւ բարելաւում — Խորապէս համոզուած թէ՛ վարժարան մը կ'արժէ այն ինչ որ է իր ուսուցչական եւ վարչական անձնակազմներու որակը, Հոգաբարձութիւնս իր նեղ պիւնտէին ներսէն չափովը, ջանաց ի գին մեծ զոհողութեանց, պաշտօնի կոչել բարձրորակ ուսուցչական գասրեր: Ուսուցչական ասպարէզը ընդհանրապէս լքուած ըլլալով փառատենչ եւ նախաձեռնութեան ոգի ունեցող երիտասարդութենէն, խիստ փոքր թուով Հայ Աւետ. չափանիշներ դոհացնող թիկնածուներու միջեւ հարկ էր կատարել ընտրութիւններ: Կարողացանք բաւականին բաւարարել ուսուցչական եւ վարչական անձնակազմերը, պաշտօնի կոչելով նոր եւ բաղդատաբար աւելի ատակ ուժեր, ու քաջալերելով պաշտօնի վրայ եղող հին ու փորձուած ուժերէն շատերը:

Բժեկական եւ առողջապահական սպասարկութիւն,— Կարեւոր նորութիւն մըն էր 1956—1957 տարեշրջանի սկիզբը ուսուցիչներու եւ այլ պաշտօնեաներու պարտադիր կուրծքի Բ. Տաւադայթներու պատկերահանումը: Թոքային վարակիչ հիւանդութեանց ախտահանուման համար խիստ կարեւոր եղող սոյն ընթացքը յետ այսու կանոնաւորապէս պիտի կիրարկուի մէն մի ուսանողի հետ հաղորդակից պաշտօնեայի վրայ:

Ամառնային վարժարան.— Թէ՛ նորեկ աշակերտութեան, թէ՛ վարժարանս փոխադրուելի փոփոքող, ինչպէս եւ այս կամ այն դասին մէջ զօրանալու պէտք ունեցող աշակերտներուն յաւելուածական ուսման կարելիութիւն ընծայելու նպատակաւ այս տարի ալ կազմակերպուեցաւ ամառնային վարժարան մը քառասնեակ մը ուսանողներու համար: Եթէ Տէրը կամենայ, ամառնային վարժարան մը պիտի կազմակերպուի նաեւ 1957 թ ամառուան ընթացքին:

Գիտեցողիկներու բաժին.— Հոգաբարձութեանս տարիներու նրազը եւ ծրագիրը 1955—1956 տարեշրջանին իրականացու երկու օգնաւն յարկերու մէջ, լուսաւոր եւ արդիական տնտեսներով եւ արհմիութիւնով, նաեւ կահուածութեամբ ու յարմարութիւններով, որ արդիւնքն է մեծ աշխատանքներու եւ զոհողութեանց: 1956—1957 տարեշրջանին հնարաւոր ամէն խնայողութիւն ընելով հանդերձ Հոգաբարձութիւնս փափաքեցաւ դիշերօթիկի բաժինը վերաբանալ Հայկազեան Գոլէճի խնամակալութեան հետ գոյացած որոշ համաձայնութեան մը համեմատ:

Վիճակագրական ծանօթութիւններ դպրոցի մասին.— Ստորեւ արուած թիւերը բացատրութեան կը կարօտին: Թէ 1955—1956 տարեշրջանին եւ թէ 1956—1957 տարեշրջանին Վարժարանաց Տնօրէնութիւնը հարկադրուեցաւ իրեն դիմող մեծութիւ աշակերտներէն ընտրելով ընդունիլ հինգ հարիւրեակ մը սաներ միայն, աւելի եւ ուսուցչական կազմի սակուածութեան պատճառաւ: Տարուէ տարի աճող աշակերտութիւնը մօտապահային մեծ հարցերու առջեւ պիտի դնէ Հոգաբարձութիւնս:

1955—1956

Բաժին	Թիւ ուսանողներու	Մանչ	Աղջիկ
Մանկապարտէզ	85	47	38
Նախակրթարան	222	120	102
Բարձրագոյն Վարժարան	189	105	84
Ընդհանուր թիւ	496	272	224
Ուսուցչական կազմ	34		
Պաշտօնական	7		

1956—1957

Բաժին	Թիւ ուսանողներու	Մանչ	Աղջիկ
Մանկապարտէզ	93	52	41
Նախակրթարան	228	119	109
Բարձրագոյն Վարժարան	192	105	87
Ընդհանուր թիւ	513	276	237
Ուսուցչական կազմ	34		
Պաշտօնական	7		

Ուսուցիչներու օտարազգիներու հօգ ասկացոյցին կիրաւեւութիւնը.— 1956 Յունիս 15ի «Մասնաւոր Վարժարաններու» ուսուցիչներու վերաբերեալ օրէնսդրութեան համեմատ, հարկադրուեցանք բարձրագին ու մեր վարժարանէն ներս պաշտօնավարող ուսուցիչներուն տարեկէմարները աստիճանաբար: Եթէ օրէնքը ատուցի օրէն գործադրուելու ըլլայ, Հոգաբարձութիւնս պիտի ենթարկուի երկեմտական դժուարին կացութեան մը, եւ պէտք է որոնէ միջոցներ՝ զիմադրուելու կացութիւնը:

Լիբանանեան Պալատեան օրէնքին կիրարկումով սեղծուած ուսումնական վիճակը.— Տասը տարիէ ի վեր անորոշ կերպով հռչակուող սոյն օրէնքը ի վերջոյ անակնկալ կերպով կիրարկութեան դրուեցաւ 1956ի ամբան ընթացքին: Անոր արամագրութիւնները աղիտաբեր եղան ու տակաւին պիտի ըլլան ընդհանրապէս Անկլօ—Սաքսոն դրութեան հետեւող վարժարաններու ուսանողներուն, եւ ի մասնաւորի Հայ վարժարաններու աշակերտութեան համար: Օրէնքը իբր նախապայման կը դրնէ՝ բժշկական, դեղագործական, ատամնաբուժական, երկրաչափական եւ օրէնսդիտական ուսմանց հետեւելու, Լիբանանեան Պալատեան Բ. բաժնի ստացումը — առժամաբար Ֆրանսական Պալատեան Բ. բաժնի համարմէն կը նկատուի Լիբանանեանին: Աւելին ըլլալով, Լիբանանեան Պալատեանի ստացումը ոչ միայն պայման է վերոյիշեալ ճիւղերու ուսման, այլև խնդրոյ առարկայ մասնագիտութեանց կիրարկման՝ Լիբանանեան հոգամասին վրայ:

Հարց պիտի արուի թէ Հոգաբարձութիւնս ի՞նչ ըրած է ասոնամեայ պայմանաժամի ընթացքին, եւ թէ ի՞նչ կը խորհի ընել ստեղծուած դժուարին կացութեան առջեւ: Ի սկզբունէ Հոգաբարձութիւնս երկու ձեւով խորհեցաւ դիմագրաւել ստեղծուելիք կացութիւնը.— Հընարաւոր միջոցներով տարուէ տարի զօրացնել արարեղէնի ուսուցումը հաստատութեանս մէջ, եւ օրէնքի գործադրութեան պարագային Պալատեանի մակարդակին հասնելու ժամանակ, պետութեան խընդրել օրէնքին բարեփոխումը կամ օրէնքի կիրարկման յետաձգումը: Արդէն աշխատանքի լծուած ըլլալով, Հայ թէ օտար Անկլօ—Սաքսոն ուսուցումի հետեւող վարժարաններու ենթարկուած կացութիւնը յանձնած ենք Ն. Վ. Վարչապետին եւ կրթական Նախարարին ուղարկութեան: Օտար վարժարաններ եւս իրենց կարգին սրոշ գործունէութիւն գոյց կուտան այս ուղղութեամբ ու պատճառ ունինք մտածելու թէ պետութիւնը արամարանական կարգադրութեամբ մը հնարաւորութիւն պիտի տայ խնդրոյ առարկայ վարժարաններու շրջանաւարտներուն՝ կարենալ հետեւելու առժամապէս իրենց առջեւ փակուած մասնագիտութեանց:

Հոգաբարձութիւնս սրոշած է նախաձեռնարկ ըլլալ այս հարցի հետապնդման Հայ համայնքներէն ներս, եւ ասոնց եւ այլ օրէնքէն ստեղծող կողմերու գործակցութեամբ յարաջ տանիլ պետութեան մօտ սկըսուած աշխատանքները:

Դպրոցական շէնքերու եւ խաղաքակերտ անբաւարարութիւնը.— Ընդհանրապէս կը հարկադրուի իր դռները փակել որոշ թուով արժանաւոր թեկնածու սաներու առջեւ՝ տեղի հ'ւ ուսուցչական անձնակազմի պակասին պատճառաւ: Նկատելով որ մերժուող ուսուցիչներու աշակերտութեան թիւը վերջին երկու տարուան ընթացքին հարիւրհազաններու կը հասնի, հարկադրուած ենք յառաջիկայ 1957ի Հոկտեմբերէն առաջ ընդարձակել դպրոցական շէնքերը: Ներկայ կարելիութիւններով 500 աշակերտ կրնանք ընդունիլ իբրեւ առաւելագոյնը: Արդէն մի քանի



դասարաններ և րկուքական բաժանումի վերածած ենք: Ապագային հաս-
տատութիւնս պէտք է կարենայ ընդունիլ 700 ուստնողութիւն: Աւելի
յետոյ 1000 աշակերտի համար անզ կարենալու ենք հայթայթել:

Կազմուած է Հոգաբարձական Յանձնախումբ մը, որ ամենալուրջ
ուսումնասիրութեան կ'ենթարկէ մեր արամադրութեան տակ դառնաող
շէնքերու եւ հողերու լաւագոյնս օգտագործման եղանակները: Կարենա-
լու համար 1957ի Հոկտեմբերին ընթացք տալ հարկերակ մը յաւելուա-
ծական թեկնածու աշակերտներու դիմումներուն:

ԳՊՐՈՅԻՆ, ՀԱՇՈՒԵԿՇԻՌԻ 1955—1956 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

Մուտք	Լ. Ռ. 112,955.60
Ելք	126,517.45
Սնտուկը կը պարտի	13,561.85
1955—1956 տարուան հաշւոյն դանձելի՝	
Հայկազեան Գոլէճէն	5846.00
Շէնքի Յանձնախումբէն	4000.00
Իրական բաց	Լ. Ռ. 3715.85

ՀԱՅ ԱԻԵՏ, ԳՈԼԷՃԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒ

1956—1957 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Մուտք	Լ. Ռ.
1. Եկեղեցւոյ շէնքի շինութեան փոխ արուած	4000
2. Հատուցումներու մինչեւ Սեպտեմբեր 1956	26940
3. Կրթաթոշակներէ	99190
4. Ընդհանուր վճարումներ	5400
5. Բժշկական վճարումներ	2500
6. Աւտարանչականէ	3200
7. Եկեղեցիէն կրթական տուրք	1500
8. Պրուստ Ուիմէնզ Գլապ	1200
9. Նուէրներէ	1000
10. Ուստնողական գարծունէութիւններէ	3000
11. Կրթական Նախարարութենէ — 4 ուսուցիչ	9750
12. Խրանութէ եւ Օթօպիւսէ	1500
13. Գիշերօթիկէ	12000
14. Վարձքերէ	8000
15. Հայկազեան Գոլէճի Բնաւորածարանէ	700
16. Հ. Բ. Ը. Մ. Է	ուչիւնչ
17. Ֆրանսական Միսիոնէ	»

Ընդհ. Մուտք 179,880

Ե Լ Բ	Լ. Ո.
1. Երկեղեցւոյ Շէնքի Յանձնախումբի վրայ տրուած	4000
2. Հասուցումներու մինչեւ Սեպտեմբեր 1956	26940
3. Աւետարանչականի վճարուելիք 0.25x32275	8125
4. Ամսաթուղականերու	94750
5. Հասուցումներու վճարուած	4500
6. Աշակերտներու եղած զեղջ	2500
7. Գրադարանին	1000
8. Բնակութարանին	1750
9. Նպաստ կրթութիւնականերու	15000
10. Մանկամսուրի գոյքեր	2500
11. Մէկ դասարանի արդի կահաւորում	2000
12. Նուէրներու	500
13. Ապահովագրութիւն	500
14. Լոյսի, ջուրի, թէլեֆոնի	2000
15. Նախակրթարանի եւ Մանկապարտէզի ծախքեր	750
16. Տպագրական եւ գրենական	1000
17. Բժշկական	500
18. Գիշերօթիկի ուստեսողէնի	10000
19. Նորոգութեանց	4500
20. Վարձք	6000

Ընդհ. ելք

188,815

Արաբերէն լեզուի պետական ուսուցիչներու հեռացման վճանգը.—
Հ. Բ. Ը. Միութեան եւ Ֆրանսական Դեսպանատան նպաստներու ջրն-
ջումէն վերջ, կարգը եկած ըլլալ կը թուի կրթական Նախարարու-
թեան: Կրթական Նախարարութիւնը 1956—1957 տարեշրջանի սկիզբը
Հայ վարժարաններուն տրամադրած ուսուցիչներէն ոմանք փորձեց փո-
խադրել պետական վարժարանները, առանց փոխանորդը տրամադրելու
Հայ վարժարաններուն: Նախարարութիւնը իր այս քայլը կ'արդարաց-
նէր այն պատճառաբանութեամբ թէ Հայ վարժարաններուն ուսուցիչ
տրամադրելու վերաբերեալ հրովարտակ կոմ հրամանագիր գոյութիւն
չունի: Եղածը պարզ կարգադրութիւն մըն է սկզբնական շրջանին եւ
ապա ուսանողութիւն դարձած եւ իբր այդ շարունակուած 20 տարի:

Հարցարձութեանս կատարած արագ եւ կորովի դիմումները բա-
րեբախտորար տուին իրենց բարերար արդիւնքը: Ոչ միայն չզըր-
կուեցանք մենք մեզի տրամադրուած ուսուցիչներէն որեւէ մէկէն, այլ
եւ նմանօրինակ հեռացումներ տեղի չունեցան այլ Հայ Աւետ. եւ Հայ
Առաք. վարժարաններէ նոյնիսկ:

Դժբախտորար այս խնդիրն ալ տակաւին լուծուած չէ: Պէտք է
ապահովել Նախարարաց ինքնուրոյն եւ Երեսփ. Ժողովէն վաւերացուած
հրամանագիր մը, որ արտօնէ Հայ վարժարաններուն տրամադրուած
որոշ թուով պետութեան հաշտոյն արաբերէնի ուսուցիչներուն:

ԱՐՈՒԵՍԻ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Որոշուած է Գիտական եւ Արուեստից բաժիններ հաստատել վարժարանի մէջ, սկսեալ տասներորդ դասարանէն, եւ Արուեստից բաժինը շարունակել 13րդ տարի մը եւս, իրենց աւելով Ֆրէշմէնի տասնամեակի մեր աշակերտները պատրաստել դարձնական կեանքի, բլլայ տան վերաբերեալ կանոցի աշխատանքներու, բլլայ գրասենեակի յատուկ պաշտօններու համար: Անցեալի փորձառութիւնը ցոյց տուած է թէ Արուեստական դասերու հետեւող մեր աշակերտները դիւրաւ կրցած են գործ գտնել ինքնաշարժի, Ունիւսայի եւ Արեւիկեան Համալսարանի նման կարեւոր հաստատութիւններու մէջ: Որոշուած է յաւաքիկայ տարի աւելի ոյժ աւել տալ տաւարական մեր եռամեայ դասընթացքին, փափաքողները պատրաստելով նաեւ Լոյստոնի Չէյմպրըր ալ Կամբրիջի աւաքիկն եւ երկրորդ տասնամեակի քննութեանց:

ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՆՆԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հայ Աւետ. Գոլէճի մարզական կեանքը եղաւ խանդավառ եւ պըսակուեցաւ երկու կարեւոր յաղթանակներով: Մեր պատքէթպոլի մանչերու խումբը արժանացաւ երկու տխոյեանական բաժանկերու: Բարեգործականը չորս երկրորդական վարժարաններու միջեւ պատքէթպոլի մրցաշարք մը կազմակերպած էր: Նոյնպէս ալ Հ.Մ.Բ.Մ.ի Սկաուտական Սորհուրդը կազմակերպած էր պատքէթպոլի մրցաշարք մը վեց տարբեր խումբերու մասնակցութեամբ: Առաջին մրցաշարքին Ֆինալիստ՝ Յովակիմեան—Մանուկեանի՝ իսկ երկրորդ մրցաշարքին Ֆինալիստ՝ Նըշան փալանճեան ճեմարանի խումբերուն՝ յաղթելով մեր խումբը կըրկնակի ախոյեանութեան արժանացաւ:

Հայագիտական մարզին մէջ ալ մեր վարժարանը կատարած է մեծածիղ աշխատանք, ձեռք բերելով համապատասխան փայլուն յաջողութիւն: Բարձր. վարժարանի բոլոր աշակերտներէ բաղկացած Գրական Միութիւն մը ունինք: Այս Միութիւնը իր գրական հաւաքոյթները ունեցաւ կանոնաւոր կերպով 15 օրը անգամ մը, պատահութիւն աւելով աշակերտներուն իրենց մշակած գրական նիւթերու մասին տրտայատուելու: Այս հաւաքոյթներէն մէկը նուիրուեցաւ Ընդհանուր Զարգացման Մրցումի մը իսկ ուրիշ մը՝ Արտաստակասն Մրցումի մը: Վարժարանս մասնակցեցաւ նաեւ Մեսրոպեան Մշակութային Միութեան կողմակերպած Գրական—Արտաստակասն մրցումին եւ արժանացաւ տրամագրելի վեց մրցանակներէն հինգին:

ՇՐՋԱՆԱԻԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մեր Շրջանաւարտից Միութիւնը այս տարի ալ ունեցաւ իսկապէս գովելի գործունէութիւն մը: Տարուան իր կարեւորագոյն երկու ձեռնարկները եղան Ապրիլ 24ի Նահատակաց Սգահանդէսը եւ Մայիս 25ի թատերադրութիւնը: Սգահանդէսը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 23ի երե-

կոյիան Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հանդիսասրահին մէջ, եղաւ մեր մէկ միլիոն նահատակներու անմահ յիշատակին արժանի իսկապէս համազգային հանդէս մը: Սրահը լեցուած էր ամբողջապէս բոլոր հոսանքներու եւ յարանուանութիւններու պատկանող հանդիսականներով: Օրուան բանախօսներն էին սիրուած բանաստեղծներ Վահէ Վահեան եւ Մ. Ի. խան:

Իսկ Մայիս 25ին ԻԻՆԵՄԲՕԻ Թատերասրահին մէջ յաջողութեամբ ներկայացուց Յակոբ Պարոնեանի Մեծապատիւ Մուրացկանները կատակերգութիւնը: Բոլոր գերակատարները հանդէս եկան յաջող խաղարկութեամբ՝ ներկաներուն ընծայելով երգիծական արուեստի վայելչի կարգի արժէքը:

Գլխաւոր դերակատարներն էին Պրք. Ենովք Պալիկեան (Աբստողոս Աղա) եւ Անդրանիկ Կարապետեան (Մանուկ Աղա):

Յառաջիկայ աշնան Շրջանաւարտից Միութիւնը կը յուսայ տոնակատարել իր կազմութեան 30ամեակը:

ՇՆՈՐԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջերս Լիբանանեան կառավարութիւնը Լիբանանեան Արժանեաց Ոսկի Շխանացով պատուեց մեր եկեղեցիէն երեք անձեր — Տաթ. Գարեգին Վարդապետեան, Տաթ. Թաւրթիւն Զպլաքեան եւ Տիար Յուսիկ Տօնապետեան:

Եկեղեցիիս Հոգաբարձութիւնը շնորհաւորական հաւաքոյթ մը սարքեց ի պատիւ իր երեք զաւակներուն, Երկուսքի գիւտեր, 27 Մայիս 1957: Մօս 15-ի երկուսն քննարանի մը ներկայ եւ սոյն հաւաքոյթին:

Նախորդ տարիներուն մեր եկեղեցիէն չորս այլ անձեր եւս պատուուած են սոյն շխանացներով: Անոնք էին Տաթարներ Տիգրան Պերպերեան, Բաբգէն Մկրտիչեան, Անդրանիկ Մանուկեան եւ Կարապետ Այվազեան:

Իսկ Պր. Յուսիկ Տօնապետեան Լիբանանեան շխանացին զատուեցաւ Ե. Նաւե. — 1955ին Ռուս Նախկին Պատերազմիկներու եւ Հաւանդումներու Միութեան Փարիզի Կեդր. Վարչութեան առաջին կարգի ոսկեայ մետալը եւ պատուոյ գիրք: 1956ին՝ Մերձ. Արեւելքի Օրքոսոֆս Պատրիարքէն ստացաւ Ե. Սր. Մարկոսի կարգի պատուանշանը. Commandeurի աստիճանով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԻԿԱՆՅ ՄԻՈՒԹԻՒՆ

- Յունիս 1, Շաբաթ Երեկոյեան ժամը 8.30ին Հայրերու Օր:
- Յունիս 6, Հինգշաբթի, Կ. Վ. ժամը 1ին, պոռոյա՝ Զմամա:
- Յունիս 13, Հինգշաբթի Կ. Վ. ժամը 3ին Պաշտամունք ՎՋԼ-կայութիւններ:

ՄԻՋ—ՇԱԲԱԹՈՒԱՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Երեքշաբթի իրիկուան խորհրդակցական աղօթաժողովները ժամը 7.30—8.30, յատկացուած են Մարգարէութեանց գիրքերու սերտողութեան, որուն կ'առաջնորդէ Պր. Մանասէ Շնորհօքեան:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՈՏԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ — ԺԱՄԸ 9.30—10.30

— Յունիս 2, Վեր. Կ. Թիլքեան, Նիւթ՝ «Բու Տէր Աստուածդ սիրես: Ինչո՞ւ»:

— Յունիս 9. Վեր. Կ. Թիլքեան, Նիւթ՝ «Պնտեկոստէի Խոհեր»:

— Յունիս 16, Վեր Կ. Թիլքեան, Նիւթ՝ «Ոչ միայն հացով...»:

— Յունիս 23, Եկեղեցադպրոցական պաշտամունք «աւարտականներուն» համար. ժողովուրդին մասնակցութեամբ: Հիւրարար պիտի լարողէ Վեր. Տօրմըն:

— Յունիս 30, Պատ. Յ. Կիւրլէքեան, Նիւթ՝ «Եսայիի փորձառութիւնը»:

Ի ՊԱՏԻ 1957Ի ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒՆ

Եկեղեցւոյս Կրթասիրաց Միութիւնը կը ծրագրէ սարքել ընկերային հաւաքոյթ մը ի պատիւ 1957ի շրջանաւարտներուն:

ՍՐԲԱԶԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ.— Փորձ մըն է որ կը կատարուի — Տիկնացիք, Զանգիք, Դպրոցք, իւրաքանչիւրը իր հերթին՝ ամիսը անգամ մը կ'երգեն պաշտամունքներուն, Երգչախումբը կ'երգէ տօնական օրերուն, զեկավարութեամբ Տօքթ. և Տիկին Գ. Պոլճիզանեանի:

Եկեղեցիին երգհոնահարը՝ Օր. Սիրվարդ Գոնեալեան՝ կը բերէ իր մասնակցութիւնը Կիրակի օրուան պաշտամունքներուն:

ՍՄԱՌՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր ամիսներուն.— Կիրակի առաւօտան պաշտամունքը տեղի պիտի ունենայ ժամը 8.30—9.30, Հոգեւորացը Կիրակի առաւօտուն ժամը 7.30—8.30, Միջշաբաթական աղօթաժողով պաշտամունքներ երեքշաբթի առաւօտ ժամը 7.30—8.30:

Ամառուան եղանակին յատուկ ուրիշ դործունէութիւններ յառաջիկային պիտի ծանուցուին:

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳՐԱՍԵՆԵԱԿ (Մայիս—Յունիս).— Հովիւը իր գրասենեակը կը գտնուի՝ Կիրակիէ զատ՝ ամէն օր Կ. ա. ժամը 11—12: Նաեւ երկուշաբթի, Զորեքշաբթի, Ուրբաթ Կ. Վ. ժամը 3—4:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ՏԵՂԵԿԱՔԵՐ»Ի ՄԱՍԻՆ

«Տեղեկաբեր» կը դրուի Հայ Աւետ. բոլոր հովիւներուն, եւ վարչաւորիւնը պատրաստ և ուղարկել բոլոր անոնց որ կը հետաքրքրուին մեր Եկեղեց. ոյ կեանքով: Այդպիսիներէն կը խնդրուի երկնողով մը իմաց տալ հովիւին:

Մեր Եկեղեցւոյ բնագծիներէն անոնց որ կը փափաքին արեւաառնան իրենց ծանօթներուն «Տեղեկաբեր» ուղարկել, քով հանին իմաց տալ հովիւին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Հայ Աւետարանական անհատներ և ընտանիքներ որ վերջերս արտասահմանէն Պէյրութ եկած ու բնակութիւն հաստատած են և կը փափաքին միանալ Հայ Աւետ. Առաջին Եկեղեցիին, թող գրաւորապէս դիմեն հովիւին միջոցաւ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան և անոնք հաճոյքով պիտի ընդունուին Եկեղեցական ընտանիքէն ներս:

